ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
«ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՈԱԿ)

ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան.
Կ.Դեմիրճյանի անվան հրապարակ
Համայնքապետարանի վարչական շենք

ԵԼԻՑ N **07**
01 փետրվարի 2024 թ.

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ
ՀԱՄՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Միքայելյան,

Համաձայն 2023 թվականի նոյեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ,Մշակույթ համայնքային ոչ առևտրային կազմակերպության և ,ՀԱՄՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ անհատ ձեռնարկատիրոջ միջև կնքված գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի մատակարարման թիվ ,ՉՀ-ՄՀՈԱԿ-ՄԱԱՊՁԲ-2024/1 պայմանագրի՝ ,ՀԱՄՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ անհատ ձեռնարկատերը պարտավորվել է պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացնելու նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կնքել համաձայնագիր՝ համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Համապատասխան ֆինանսական միջոցները հաստատվելուց և գնումների պլանը գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 2024 թվականի հունվարի 09-ին էլեկտրոնային փոստի միջոցով առաքվել է ծանուցում համաձայնագիր կնքելու մասին: 2024 թվականի հունվարի 29-ին սույն ընթացակարգի գնումները համակարգողի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով առաքվել է ծանուցում այն մասին, որ համաձայնագրի կնքման վերջնաժամկետը սահմանված է սույն թվականի հունվարի 30-ը ներառյալ: ,ՀԱՄՄԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ անհատ ձեռնարկատիրոջ կողմից Օրենքով և պայմանագրով սահմանված ժամկետում չի ստորագրվել համաձայնագիրը:

Հիմք ընդունելով 2023 թվականի նոյեմբերի 22-ին կնքված գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի մատակարարման թիվ ,ՉՀ-ՄՀՈԱԿ-ՄԱԱՊՁԲ-2024/1 պայմանագրի 8՝13-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ,Մշակույթ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը միակողմանի լուծում է 22.11.2023թ. կնքված թիվ ,ՉՀ-ՄՀՈԱԿ-ՄԱԱՊՁԲ-2024/1 պայմանագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատած ,Գնումների գործընթացի կազմակերպմանե կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Հարգանքով՝

ՏՆՕՐԵՆ Ա. ԱԲԳԱՐՅԱՆ